# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 21 » դեկտեմբեր 2020 թ. N 204

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Փամբակ համայնք,
Հասցե՝ 1փողոց 23
pambak.lori@mta.gov.am
098-86-93-09

ՀՀ Լոռու մարզի մարզպետ
Ա. Խաչատրյանին

Հարգելի Ա. խաչատրյան

Ձեզ եմ ներկայացնում Փամբակ համայնքի ավագանու թիվ 25, 26, 27,28-Ն,29-Ն 30, 31,32 որոշումները:

Առդիր 17 թերթ:

Համայնքի ղեկավար՝ Ս. Լ. Ոլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N25

## ՓԱՄԲԱԿԻ ՀԱՄՅՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 32 կետին համապատասխան

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ

Հաստատել 2020 թվականի գույքի գույքագրման արդյունքները : Գույքի ավելցուկ կամ պակասորդ չի հայտնաբերվել:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՉԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար Մ. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N26

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Բյուջետային համակարգի մասին >> << օրենքի 35-րդ հոդվածի 1-ի մասի համապատասխան

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ

Ընդունել և ի գիտություն Փամբակ համայնքի 2020 թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման մասին հաղորդումը:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՉԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուիլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N27

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ

1. Հաստատել Փամբակ համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Փամբակ համայնքի ավագանու 2020 թվականի փետրվարի 26-ի << ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավարի վարձատրության չափը, աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին>> թիվ 05 որոշումը:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

Հավելված

Փամբակ համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 27 որոշման

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐՃԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ , ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ,ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 6
2. Աշխատակազմի հաստիքացուցակ և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ սահմանվում է հաստիքային մեկ միավորով) |
|---|---|---|
| ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Համայնքի ղեկավար | 1 | 200.0 |
| Համայնքի ղեկավարի օգնական | 0.5 | 106.0 |
| ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ | | |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 128.0 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 125.0 |
| ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| Գրադարանի տեխ. սպասարկող | 0.5 | 110.0 |
| Տեխնիկական աշխատող | 0.5 | 106.0 |
| ԸՆԴԱՄԵՆԸ | 4.5 | 775.0 |

Փամբակ համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N28-Ն

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> << օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ և 19-րդ կետերով <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> << օրենքի 8-րդ , 9-րդ , 10-րդ , 11-րդ, 12-րդ, 13-րդ , 14-րդ հոդվածներով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> << օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ

1. Սահմանել << Լոռու մարզի Փամբակ համայքնում 2021 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել << արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

Հավելված

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Փամբակ համայնքի ավագանու

2020 թվականի դեկտեմբերի 15 թիվ 28-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ

2021 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ և ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ« ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան համայնքի վարչական տարածքում նոր շենքերի , շինությունների և ոչ հիմնական շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. Հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ

բ. Սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ,

-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար՝հիսուն հազար դրամ

-1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար՝ հիսուն հազար դրամ

-3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հարյուր հազար դրամ.

Գ. Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

-մինչև 20քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեք հազար դրամ

-20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի շինությունների համար՝ հինգ հազար դրամ.

2. համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման , վերականգնման , ուժեղացման , արդիականացման և բարեկարգման աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. Չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների , շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ երեք հազար դրամ

բ. Բացի շենքերի և շինությունների վերակառուցման ,ուժեղացման , վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և , բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից , կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն

հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերին և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով ,

գ. Նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա , սույն օրենքի իմաստով , այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի առաջին մասի առաջին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը

3. համայնքի վարչական տարածքում շենքերի , շինությունների և քաղաքաշինական օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հինգ հազար դրամ

4. համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ երկու հարյուր հազար դրամ

5. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքներում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ

6. համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի , սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ վաթսուն հազար դրամ

7. Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ

8. համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ

9. համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնակ և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք հարյուր դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրամ
-500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ

բ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի թույլտվության համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար երեք հարյուր դրամ
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տաս հազար մեկ դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ տասներեք հազար մեկ դրամ
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար մեկ դրամ
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի դեպքում՝ քսանհինգ հազար մեկ դրասմ
-500-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ հազար մեկ դրամ

10. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

11. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի,զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ տաս հազար դրամ
բ. Հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,
գ. Բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ
դ. Խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ
ե. Շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ
զ. Վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ

12. համայնքի վարչական տարածքում , համայնքային կանոններին համապատասխան , հանրային սննդի կազմակերպման և իրացման թույտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում՝

ա. հիմնական շինությունների ներսում
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար դրամ
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար և մեկ դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասը հազար մեկ դրամ
-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար մեկ դրամ
-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ քսան հազար մեկ դրամ
-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեսուն հազար մեկ դրամ

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար դրամ
-26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հազար երկու դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երկու հազար դրամ

-100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ չորս հազար դրամ

-200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ ութ հազար դրամ

-500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ տասնհինգ հազար դրամ

13. ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար , բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երկու հազար դրամ

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար հինգ հարյուր դրամ

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ

դ.այլ արտաքին գովազդի համար՝ հազար հինգ հարյուր դրամ

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմնված տուրքի 25 %-ի չափով

զ. Եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10%-ի չափով.

14. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը ( զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման , ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ

15. համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ տասը հազար դրամ

16. համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հինգ հարյուր հազար դրամ .

17. համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ երկու միլիոն հինգ հարյուր հազար դրամ

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ

գ. 7 հա –ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ յոթ միլիոն դրամ

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ տասը միլիոն դրամ

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ տաս հազար դրամ
2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում ՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար

համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ .

4. Համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ .

5. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երեք հազար դրամ .

6. Համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին ( վերնիսաժերին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ երկու հազար դրամ

7. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը՝

   1) Կենցաղային աղբի համար՝

   ա. համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար վճար՝ ամսական մեկ հարյուր դրամ

   բ. Ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդհանուր մակերեսի համար՝ հինգ դրամ

   2) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

   ա. մեկ խորանարդ մետր աղբի համար՝ մեկ հազար դրամ

8. Համայնքում առկա ոչ բնակելի նպատակային նշանակության շենքերում և շինություններում , այդ թվում՝ հասարակական , հանրային , ծառայությունների մատուցման , արտադրական , արդյունաբերության վճարը սահմանվում է ըստ շինության ընդհանուր մակերեսի հետևյալ դրույքաչափերով՝

   ա. առևտրի (այդ թվում ՝ շուկաների), հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների իրականացվող շինությունների մասով մեկ քառակուսի մետր մակերեսի համար ՝ հիսուն դրամ

   բ.հյուրանոցների և հյուրանոցային տնտեսության ծառայություններ, ինչպես նաև այլ գործունեություն իրականացնող հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար երեսուն դրամ

   դ. արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով ՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար տաս դրամ

ե. կրթական , մշակութային, առողջապահական , սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլ հասարակական շինությունների մասով՝ մեկ քառակուսի մետր մակերեսի համար երեք դրամ

9. համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ հինգ հարյուր դրամ փոխհատուցման վճար:

10. Համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների համար՝

Ա. կենդանիների հիվանդությունների բուժման,կանխարգելման հարցերով խորհրդատվության համար՝ հինգ հարյուր դրամ

Բ. Ծննդօգնություն
ա. թեթև միջամտություն մեկ հազար դրամ
բ.ծանր միջամտություն հինգ հազար դրամ

Գ. Վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում՝ կախված կենդանու տեսակից (բացառությամբ՝«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների)
ա. Մանր կենդանի մեկ հարյուր դրամ
բ. Խոշոր կենդանի երկու հարյուր դրամ

Դ. Կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար երկու հարյուր դրամ

Ե. Ախտահանություն 1քառ. մետր երկու հարյուր դրամ

Զ. Միջատազերծում (դեզինսեկցիա) մեկ քառ.մետր մեկ հարյուր դրամ

Է. Կրծողների ոչնչացում (դեռատիզացիա) մեկ քառ.մետր երկու հարյուր դրամ

Ը. Արհեստական սերմնավորում հինգ հազար դրամ

Թ. Կենդանու հերծում
ա. մանր կենդանի մեկ հազար դրամ
բ. խոշոր կենդանի երեք հազար դրամ

Ժ. Կենդանու բուժում՝ կախված հիվանդության տեսակից և կենդանու տեսակից յուրաքանչյուր այցելությունը մեկ հազար դրամ

Ի. Կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից
ա.մանր կենդանի մեկ հազար դրամ
բ.խոշոր կենդանի երկու հազար դրամ

Լ. Կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2020թ. հուլիս ամիսը)
ա.մանր կենդանի մեկ հազար դրամ
բ.խոշոր կենդանի երկու հազար դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ն. Բիլյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 29-Ն

## 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Ղեկավարվելով <<Բյուջետային համակարգի մասին >> ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇԵՑԻՆ

Հաստատել Փամբակ համայնքի 2021 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

Հավելված

<<15>> դեկտեմբերի 2020թ. ավագանու թիվ 29-Ն

Որոշման

## ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Փամբակ հայնքի 2021 թվականի բյուջեն

1. Եկամուտների գծով -11801.2(տասնմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ
2. Այդ թվում վարչական բյուջեի մասով-11801.2(տասնմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ

   Ֆոնդային մասով -0 դրամ
3. Ծախսերի գծով-11801.2(տասնմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ
4. Այդ թվում վարչական բյուջեի մասով-11801.2(տասնմեկ միլիոն ութ հարյուր մեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ

   Ֆոնդային մասով -0 դրամ

Փամբակ համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻ ԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2019 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N30
# ՀՀԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ <<ՀԵՆՐԻԿ ԻԳԻԹՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>>-Ի ՀՈՂ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով << հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 6-րդ կետով, 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀԿԳՄՍ նախարարության <<Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոնի>> դմումը՝

ՓԱՄԲԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1. Վերականգնել ՀՀԿԳՄՍ նախարարություն <<Հենրիկ Իգիթյանի անվան գեղագիտական ազգային կենտրոն>> ՊՓԲԸ-ի Փամբակ գյուղի տարածքում գտնվող ստեղծագործական առողջարարական կենտրոնի շինությունների զբաղեցրած հողամասերի հողհատկացման հիմքերը , Փամբակ համայնքի կադաստրային քարտեզի 410-003 ծածկագրի 1.6 հա հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի
2. Հողամասերը չեն ընդգրկված ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի հողերի կազմում:
3. Օրենքի ուժով սեփականության իրավունքով հատկացնել Հի ստեղծագործական առողջարարական կենտրոնի շինությունների պահպանման և սպասարկման նպատակով:
4. Հողը տրամադրում ենք նախապայմանով 2 տարի շին.աշխատանքներ չսկսելու և հողը նպատակին չծառայեցնելու դեպքում նշված կազմակերպությունը զրկվում է հողի օգտագործման իրավունքից և հողը դառնում է համայնքային սեփականություն:
5. Հողամասին հատկացնել հետևյալ փոստային հասցեն՝ 1-ին փողոց թիվ 45ա

6. Սույն որոշումից ծագող իրավունքները մեկամսյա ժամկետում ենթակա են պետական գրանցման << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վանաձորի տարածքային ստորաբաժանումում:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ( ) | ԴԵՄ( ) | ՉԵՌՆՊԱՀ( ) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար Ս. Ուլիխանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՓԱՄԲԱԿԻԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N31

## ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԻԱՆՎԱԳ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն ՀՀ <<Աշխատանքային օրենսգրքի>> 219-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի դրույթներով

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԸ ՈՐՈՇՈՒՄ ԵՆ

1. ՀՀ Լոռու մարզի Փամբակ համայնքի ղեկավար Սամսոն Ուլիխանյանին խրախուսել միանվագ դրամական պարգևատրումով 130 000 հհ դրամի չափով , իրեն վերապահված լիազորությունները բարեխիղճ կատարելու 2020 թվականի բյուջեի եկամուտների բարձր ցուցանիշները ապահովելու համար:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ուլիխանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ՓԱՄԲԱԿԻԱՎԱԳԱՆԻ

« 15 » դեկտեմբեր 2020 թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 32

### 06-107-0041-0005 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 1.01755 ՀԱ ԳՅՀՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> 18-րդ հոդվածի 31-րդ կետով, 43-րդ հոդվածով, << Քաղաքացիական օրենսգրքի հոդվածներով, << Հողային օրենսգրքի հոդվածներով, << Կառավարության Պետական և Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 12.04.2001թ. թիվ 286 որոշմամբ և կադաստրային հատակագծերում և քարտեզներում հայտնաբերված սխալների ուղղման հրահանգը հաստատելու մասին>> թիվ 168-Ն որոշման 9-րդ հոդվածի 5-րդ կետով

1. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի հետ կապված անճշտությունների որոշման համար Փամբակ համայնքի վարչական սահմաններում գտնվող 06-107-0041-0005 ծածկագրի տակ գտնվող հողամասի նկատմամբ , քանի որ գոյություն չունեն որևէ իրավունք հաստատող փաստաթղթեր և այն << կառավարության 30.03.2006թ .թիվ 514-Ն որոշմամբ սխալմամբ փոխանցված չէ համայնքին , ուստի առաջնորդվելով << կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի կոմիտեի նախագահի 186-Ն հրամանի 2-րդ գլխի 9-րդ հոդվածի 5-րդ կետով նշված հողամասի նկատմամբ ճանաչել Փամբակ համայնքի սեփականության իրավունքը:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Անշարժ գույքը չի գտնվում << ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում , չի հակասում քաղաքաշինական նորմերին , չի առաջացնում սերվիտուտ:

| Համայնքի ավագանու անդամներ | ԿՈՂՄ(3) | ԴԵՄ(0) | ՁԵՌՆՊԱՀ(0) |
|---|---|---|---|
| Շուշանիկ Հակոբյան | | | |
| Յուրա Բաղրամյան | | | |
| Սասուն Բեգլարյան | | | |

Համայնքի ղեկավար՝ Ս. Ռիլիխանյան